ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» փետրվարի 2015թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.1/1 ՇԵՆՔԻ Հ.27/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 270-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող, Աբովյան փողոցի հ.1/1 շենքի հ.27/1 բնակարանը՝ 23.0 քմ մակերեսով, (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 13.11.2014թ. հ.13112014-01-0082 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Վահան Պետրոսյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 1/1 ՇԵՆՔԻ Հ. 27/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վահան Պետրոսյանը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Կենտրոն վարչական շրջանի Աբովյան փողոցի հ. 1/1 շենքի հ. 27/1 հասցեում գտնվող, Երևան համայնքի սեփականությունը համարվող բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 13.11.2014թ. N13112014-01-0082 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) խնդրանքով:

Նշված բնակարանը հանդիսանում է սեփականության իրավունքով Վահան Պետրոսյանին պատկանող, Աբովյան փողոցի հ. 1/1 շենքի հ. 27 հասցեում գտնվող բնակարանի մի մասը: Համաձայն Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի թիվ 7 տեղամասի լիազոր ներկայացուցչի 26.11.2014թ. տեղեկանքի՝ Վահան Պետրոսյանը իր ընտանիքով տարիներ շարունակ բնակվել է այդ բնակարանում: Կատարելով բոլոր անհրաժեշտ կոմունալ և սպասարկման վճարները, քննարկվող հատվածի հատկացման վերաբերյալ փաստաթղթերի բացակայության պատճառով չեն կարողացել սեփականաշնորհել տվյալ մասը: Ընտանիքի անդամները ներկայացրել են իրենց համաձայնությունը քննարկվող գույքը (Աբովյան փողոցի հ. 1/1 շենքի հ. 27 բնակարանի մի մաս) Վահան Պետրոսյանի անվամբ սեփականաշնորհելու վերաբերյալ:

Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի ք. Երևան, Կենտրոն վարչական շրջանի Աբովյան փողոցի հ.1/1 շենքի հ.27/1 հասցեում գտնվող 23.0քմ բնակելի տարածքի անհատույց օտարման համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևան քաղաքի ավագանու որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 1/1 ՇԵՆՔԻ Հ. 27/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Աբովյան փողոցի հ. 1/1 շենքի հ. 27/1 հասցեում գտնվող, Երևան համայնքի սեփականությունն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 1/1 ՇԵՆՔԻ Հ. 27/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Աբովյան փողոցի հ. 1/1 շենքի հ. 27/1 հասցեում գտնվող, Երևան համայնքի սեփականությունն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ